Հայկական Սովետական Հանրագիտարան (Soviet Armenian Encyclopedia) 8.djvu/166

Exported from Wikisource on 06 օգոստոսի, 2024 թ.

Այս էջը սրբագրված չէ

1923-ին թատրոնը պետականացվելն այժմ կրում է Մ . Ֆ . Ախունդովի անունը: Այստեղ բեմադրվել են նաև Շիրվանզադեի «Նա– մուս», Ս . Բաղդասարյանի «Արյունոտ անապատ» և այլ պիեսներ: Թատրոնում նշանակալից վաստակ ունեն Ս . Մովլա– վին, Ռ . Իսֆանդիյարլին, Ի . Մուսաևը, Ի» . Գազի նան, է . Հախվերդիևը, Ֆ . Ալի– խանովան, Ի . Համզաևը, Զ . Համզաևան: Այստեղ են աշխատել նաև դերասանու– հիներ Մ . Անախչյանը, Ն . Պետրոսյանը, Զ . Բուդաղովան, Լ . Գրիգորյանը և ուրիշ– ներ: 1930-ին Երևանի ադրբ . թատրոնը հյուրախաղերով հանդես է եկել Նախի– ջևանում և Օրդուբ աղում, 1937-ին Սուն– դուկյանի անվ . թատրոնը՝ Նախիջևանում: Նախիջ . ԻԱՍՀ–ից են սերում դերասան– ներ Ս . Սաֆրազյանը, Գ . և Խ . Պետրոս– յանները, Հասմիկը, Մ . Մանվելյանը, Վ . Միրզոյանը, 0 . Սևումյանը, 0 . Բունիա– թյանը, Ս . Գասպարբեկը, դրամատուրգ– ներ՝ Վ . Աղասյանը, Լ . Մանվելյանը, Փառ– նակեսը, Հ . Զավիդը, Մ . Ա . Օրդուբադին, թատերական նկարիչ՝ Ր . Քյանգյարլին (աշակերտել է Ե . Թադևոսյանին) և ուրիշ– ներ: Я . Հովակիմյան Պատկերազարդումը տես 7-րդ հատորի 704–705-րդ էջերի միջև՝ ներդիրում, աղ– յուսակներ XXIII–XXIV: Գրկ . Կ ո ր յ ու ն . Վարք Մաշտոցի, Ե . , 1962: Ա ո ա ք ել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղ–պատ, 1896: Մովսես Ի^որենացի, Պատմություն Հայոց, Ե . , 1968: Ղազար Փարպեցի, Պատմու– թիւն Հայոց, Տփղիս, 1904: Ալիշան Ղ–, Սիսական, Վնտ . , 1893:

ԶաբարիաԱգ ու– լ ն ց ի, Օրագրություն, Ե . , 1938: Ս և դ ր ա կ– յ ա ն Ա . , Հնությունք հայրենյաց ի գավառին Երնշակու, Վաղ–պատ, 1872: Ստորագրութիւն Նախիջևանու, «Բազմավեպ», h . 50, 1892, էջ 542–544: Լա լա յան Ե . , Օրդուբադի կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան կամ Գողթն, «ԱՀ», 1904 – 05, № 11 – 12: Մմբատյանց Մ . , Նկարագիր Սուրբ Կարա– պետի վանից Երնջակա և շրջավայրից նորա, ՏՓղիս, 1904: Նույնի, Նախճավան կամ Նախիջևանի ոստիկանական շրջան, Թ . , 1906: Առաքելյան Ա . , Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, h . 2, Ե . , 1964: Այվազյան Ա . , Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձաննե– ը, Ե . , 1978;; Шопен и . , Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской импе– рии, СПБ* 1852; Хармандарян С . В . , Ленин и становление Закавказской федера– ции 1921–1923, Е . , 1969; Детище ленинской национальной политики, Баку, 1974 . ՆԱԻՓԱԵՎԱՆ՝ ՀԱՐԹԱՎԱՅՐ, Մեր– ձարաքյան հարթավայրի մասը Նախի– ջևան և Զագրիչայ գետերի ստորին հո– սանքների շրջանում, Նախիջևանի Ինքնա– վար Սովետական Սոցիալիստական Հան– րապետությունում: Արլ–ից և հվ–արլ–ից պարփակված է Դարիդաղ լեռնաշղթայի ճյուղավորություններով, հս–ից՝ Շարուրի հարթավայրով, արմ–ից՝ Արաքս գետով: Երկարությունը մոտ 30 կմ է, լայնությու– նը՝ 6–20 կմ, միջին բարձրությունը՝ 890 մ՝ . Ունի հս–արլ–ից հվ–արմ . ընդհանուր թեքություն: Ն . հ–ի հատակը իջվածք է՝

լցված ցամաքային նստվածքներով . : Օգ– տակար հանածոներից կա քարաղ: Մա– կերևույթը տափարակ է՝ տեղ–տեղ խախտ– ված ոչ բարձր թմբաշարերով ու բլուրնե– րով: Կլիման խիստ ցամաքային է, չորա– յին: Հունվարի միջին ջերմաստիճանը –3°Շ–ից մինչև—6°Cէ, հուլիսինը՝ 28°C: Տարեկան տեղումները 190–300 մմ են, վեգետացիոն ժամանակաշրջանը՝ 265 օր: Գետերը (Արաքսի ձախավնյէս վտակնե– րը)՝ Նախիջևանն ու Զագրիչայը, հիմ– նականում օգտագործվում են ոռոգման համար: Արաքսը սահմանային գետ Է, որի վրա կառուցված է «Արաքս» հիդրոտեխ– նիկական հանգույցը: Հողերը գորշ են, տեղ–տեղ՝ աղակալած: Բուսածածկույթում գերակշռում են չորասեր բույսերը: Տա– ռածված է օշինդրաաղուտային կիսա– անապատային բուսականությունը: Կեն– դանական աշխարհը հիմնականում ներ– կայացված է կրծողներով (ոզնի, նապաս– տակ, համստեր, ավազամուկ են), սողուն– ներով (թաքիրային կլորագլուխ, ռադե իժ, Փոքր վիշապօձ են) և միջատներով: Ն . հ–ում մշակում են հացահատիկ, ծխա– խոտ, խաղող: Ղ . Մուրադյան ՆԱԻՓ&ԷՎԱՆԻԿ, գյուղ Լեռնային Ղարա– բաղի Ինքնավար Մարզի Ասկերանի շըր– ջանում, շրջկենտրոնից մոտ 7 կմ հարավ: Սովետական տնտեսությունն զբաղվում է այգեգործությամբ, հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ: Ունի միջնակարգ դպրոց, ակումբ, կապի բա– ժանմունք, բուժկայան: Ն–ում պահպան– վել են «Նահատակ»

հնավայրը (XIII դ .), Ս . Աստվածածին եկեղեցին (XVIII դ .):

ՆԱԻՓՐ, հոտ, 1 . նույն տեսակի կաթնա– սուն կենդանիների խումբ, որը բնորոշ– վում է վարքի, արտաքին պայմանների նկատմամբ որոշակի ռեակցիայի ընդհան– րությամբ: Վայրի կենդանիների հոտա– յին կյանքն առաջացել է էվոլյուցիոն զար– գացման (բնական ընտրության) պրոցե– սում, որպես արտաքին պայմաններին խմբային հարմարվածության ձև: Կենդա– նիների թիվը հոտում մեծ մասամբ կախ– ված է տեսակից: Կետերի, կապիկների հոտն ընդգրկում է մի քանի տասնյակ, մինչդեռ ամերիկյան բիզոններինը (ան– ցյալում) հարյուրավոր, իսկ հս . եղջերու– ներինը, սայգակներինը, առանձին տե– սակ այծեղջյուրներինը (գնու)՝ 1,5–2 հզ . գլուխ կենդանիներ: Ն–ում եղած կենդանի– ները ենթարկվում են որոշ ներքին օրի– նաչափությունների, որն արտահայտվում է կերհայթայթման, թշնամիներից պաշտ– պանվելու, միգրացիաների դեպքում առաջնորդին հետևելու անհրաժեշտու– թյան և բազմաթիվ այլ ձևերով: 2 . Խո– շոր տնտեսությունում պահվող նույն տեսակին պատկանող գյուղատնտ . կեն– դանիների որոշակի գլխաքանակ: Ի տար– բերություն վայրի կենդանիների հոտի, գյուղատնտեսական կենդանիների Ն . տնաեսական–զոոտ եխնիկական հասկա– ցություն է: Մեկ տնտեսությունում պահ– վող խոշոր եղջերավոր անասունների (տա– վարի) գլխաքանակը կոչվում է Ն . , ոչ– խարներինը՝ հոտ, ձիերինը՝ երամակ ևն: Ն–ի

կառուցվածքը՝ տարբեր սեռահասա– կային կենդանիների որոշակի տոկոսա– յին հարաբերությունը, պահպանվում է վերարտադրության միջոցով: Իբրև կանոն էգերի գլխաքանակը գերազանցում է արա– ներին: Տարբեր սեռահասակային խմբե– րում կենդանիների թիվը, դրանց օգտա– գործման ուղղությունները և ժամկետնե– րը որոշվում են Ն–ի շրջանառության պլա– նավորմամբ՝ ելնելով նրանց մթերատվու– թյան ուղղությունից և այլ գործոններից: Հաճախ Ն. են անվանում գյուղատնտեսա– կան կենդանիների հավաքական գլխա– քանակը (կոլտնտեսային Ն. են): Վ. Ոսկանյան ՆԱԽ ՀԱՎԱՆ, գավառ Մեծ Հայքի Վասպու– րական նահանգում, Երասխի Նախճավան վտակի հովտում: Ընդգրկե? է իր կենտրոն Նախճավան քաղաքը և նրա մերձակայքը՝ 1220 կմ2 տարածությամբ (համապատաս– խանում է հիմնականում այժմյան Նախի– ջևանի ԻՍՍՀ Բաբեկի շրջանին): Ս. Երեմ յան

ՆԱԽՃԱՎԱՆ, Ն ա խ ճ ու ա ն, Ն ա խ– ճըւան, Նախջաւան, Նախ– ջուան, Նախիջաւան, Նախի– ջևան, քաղաք Մեծ Հայքի Վասպու– րական նահանգի Նախճավան գավառում, Երասխի Նախճավան վտակի աջ ափին: Ըստ ավանդության, Ն. Հայաստանի հնա– գույն բնակավայրն է, որն իբր մ, թ. ա. 3669-ին հիմնել է Նոյ նահապետը, երբ համաշխարհային Զրհեղեղից հետո իր գերդաստանով նախ իջևանել է այնտեղ («Նախիջևան» հետագա անվանաձևն առաջացել է Նոյի «նախնական իջևան» ժող. ստուգաբանությունից): Հնուց

հա– յերը Ն–ում մատնանշել են Նոյի գե– ղեզման– ուխտատեղին: Հովսեպոս Փլա– վիոսը (I դ .) Ն . անվանում է Ապովատե– ոիոն (AjtoPatfipiov – Իջևան), Պտղո– մեոսը (II դ .)՝ Նաքսուանա (Nalouava), արաբ, աշխարհագիրները՝ Նեշուի կամ Նեշևի: Հայ հին հեղինակները Ն . որպես ամ– ոոց հիշատակում են մ . թ . ա . VI դ . պատ– մական դեպքերի կապակցությամբ: Մ . թ . ա . Ill–II դդ . Ն . եղել է Մուրացյան բարձ– ոագահ տոհմի կալվածքը: Արտաշեսյան– ների և Արշակունիների ժամանակ միաց– վել է արքունի կալվածներին: Արշակու– նիները Ն–ի կառավարումը հանձնարա– ոել էին Թագավորահայր տիտղոսը կրող Մարզպետունիների տոհմին: IY–X դդ . Ն . եղել է նաև մարդպետական եպիսկո– պոսի աթոռանիստը: IV դ . Ն . վաճառա– շահ և խոշոր քաղաք էր՝ բազմահազար հայ և հրեա բնակչությամբ: Փավստոս Բուզանդը գրում է, որ Շապուհ II Սասան– յան արքան 360-ական թթ . Ն–ից գերեվա– ոել է 2 հզ . երդ հայ և 16 հզ . երդ հրեա բնակիչ: Արշակունյաց թագավորության անկումից (428) հետո Սասանյանները Ն . դարձրել են պարսկ . ռազմական, վե– ոացրել Հայոց շահապի (քաղաքապետի) պաշտոնը, իսկ նրա տոհմակիցներին հատ– կացրել մերձակա ճահուկ գավառը: V– VII դդ . Ն . եղել է օտար տիրապետության դեմ հայ ազատագրական շարժման կենտ– ոոններից մեկը: 630-ական թթ . Ն . ազա– տագրվել է պարսկ . լծից և մտել անկ ախ ա– ցած Հայաստանի կազմում: 640-ական թթ . սկզբին Ն . պաշարել են արաբ, նվաճող– ները, սակայն, հակահարված ստանալով Հայաստանի կառավարիչ և

սպարապետ Թեոդորոս Ռշտունուց, նահանջել են: 654–ին արաբ, զորքերին հաջողվել է ռազ– մակալել Ն . , բայց 655-ի գարնանը հայերը

About this digital edition

This e-book comes from the online library Wikisource[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported[2] license or, at your choice, those of the GNU FDL[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at this page[4].

The following users contributed to this book:

---

1. ↑ https://wikisource.org
2. ↑ https://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0
3. ↑ https://www.gnu.org/copyleft/fdl.html

4. ↑ https://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium